ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության Իրավական փոխօգնության վարչության պետ Արմենուհի Հարությունյանի ՝ Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան) գործուղման արդյունքների մասին

Գործուղված պաշտոնատար անձ՝ Արմենուհի Հարությունյան

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարության Իրավական փոխօգնության վարչության պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան), 2018թ. հուլիսի 16-19-ը:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարության հյուպատոսական ծառայությունների տասներկուերորդ համատեղ նիստին:

Քննարկված թեմաները՝ 2017թ. փետրվարին Երևանում կայացած տասնմեկերորդ համատեղ նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքը, իրավական, մաքսային և այլ բնագավառներում համագործակցության, դատապարտյալների փոխանցման, էքստրադիցիայի ոլորտներում գործակցության հետագա զարգացման և ամրապնդման հարցերը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝ 2018թ. հուլիսի 16-19-ը Իրանի Իսլամական Հանրապետությունում (Թեհրան) կայացած Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարության հյուպատոսական ծառայությունների տասներկուերորդ համատեղ նիստին Հայաստանի Հանրապետության կողմից մասնակցել են ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության պետ Վլադիմիր Կարմիրշալյանը, ՀՀ արդարադատության նախարարության Իրավական փոխօգնության վարչության պետ Արմենուհի Հարությունյանը, ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության հյուպատոս Գարիկ Գրիգորյանը, իսկ իրանական կողմից՝ ԻԻՀ ԱԳՆ հյուպատոսական գլխավոր վարչության պետ Ալի Չեգենին, ԻԻՀ Նախագահի աշխատակազմի, արդարադատության նախարարության, ոստիկանության, Ինտերպոլի ԱԿԲ-ի, քաղաքացիական կացության ակտերի գրանցման կազմակերպության ներկայացուցիչները:

Առանձին հանդիպում տեղի ունեցավ նաև ԻԻՀ ԱԳՆ նախարարի տեղակալ Հոսեյն Փանահի Ազարի հետ, որի ժամանակ ԻԻՀ ԱԳՆ նախարարի տեղակալը գոհունակություն հայտնեց ՀՀ հետ համագործակցության բարձր մակարդակի, բարեկամական և եղբայրական հարաբերությունների զարգացմանն ուղղված ջանքերի վերաբերյալ: Քննարկվեցին ԻԻՀ հետ համագործակցության իրավական, մաքսային և հյուպատոսական այլ հարցեր:

Նիստի ընթացքում քննարկվեցին նաև ԻԻՀ հետ «Դատապարտյալների փոխանցման մասին» 2012թ. ստորագրված և 2017թ. ուժի մեջ մտած պայմանագրի անխոչընդոտ իրականացման, իրավական փոխօգնության խորացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության, էքստրադիցիայի, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերում փոփոխություններ մտցնելու դեպքում փոխադարձաբար միմյանց ծանուցելու հետ կապված հարցեր:

Նիստի ավարտին ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության պետ Վլադիմիր Կարմիրշալյանը և ԻԻՀ հյուպատոսական գլխավոր վարչության պետ Ալի Չեգենին ստորագրեցին Փոխըմբռնման հուշագիր: Կողմերը պայմանավորվեցին հաջորդ համատեղ նիստն անցկացնել 2019թ. Երևանում:

ՀՀ արդարադատության նախարարության

Իրավական փոխօգնության վարչության պետ՝

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ